ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-Սուբ-15/01

ք. Երևան «26» «հունվարի» 2015թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Խ.Աղաբեկյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Գ.Ղազարյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ»** ծրագրի՝ բաժին 08, խումբ 02, դաս 02, ծրագիր 01 (Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **44 370 100 (քառասունչորս միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա

ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

4.2. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (հավելված 3) հիման վրա:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2015 թվականի հունվարի 12-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007995
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ

Ս. Առաքելյան

(ստորագրություն)

Կազմակերպություն
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ

ք.Երևան, Տիգրան Մեծի 73
«Անելիք Բանկ» ՓԲԸ

ՀՀ 11800064791700
ՀՎՀՀ 02519651
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն

Փ. Ղամբարյան

(ստորագրություն)

Հավելված № 1
«26» «հունվարի» 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-Սուբ-15/01 պայմանագրի

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Տիգրան Մեծի 73
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Անելիք Բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007995	ՀՀ 11800064791700
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02519651
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ	«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն
Խ. [illegible]	**Գ. Ղազարյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի իրականացման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Հրատարակչական միջոցառումների իրականացում - բնապահպանական թեմաներով բուկլետների մշակում և տպագրում	Հայաստանի բնությանը վերաբերող տեղեկատվության տարածում	Հասարակության տարբեր խավերի իրազեկում և կապերի հաստատում	Տպագրված բացիկներ 1000 հատ	30.12.2015թ.	**150000**

2	Թանգարանային արժեքների հաշվառման, պահպանման, ուսումնասիրման ախտահանման, վերականգնման միջոցառումների իրականացում	Ֆոնդային արժեքների հաշվառում, պահպանում, ուսումնասիրում, ախտահանում, վերականգնում	1. Հիմնական ֆոնդի համալրում նոր ցուցանմուշներով 2. Թանգարանային նմուշների լուսանկարահանում, անձնագրավորում, քարտագրավորում 3. Ֆոնդերի պահպանում 4. Թանգարանային ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում 5. Վերականգնողական միջոցառումների իրականացում, 6. Մշտական ցուցադրության համալրում հիմնական ֆոնդի ցուցանմուշներով 7. Գիտաաժանդակ ֆոնդի ցուցանմուշների լուսանկարահանում 8. Գիտաաժանդակ ֆոնդի մատյանի ստեղծում 9. Թանգրանային ցուցանմուշների անվանումների պարբերաբար ճշտում համապատասխան մասնագետների հետ	համալրված ցուցանմուշ՝20 Լուսանկարահանված, արձանագրավորված և քարտեզագրավորված 20 ցուցանմուշ Ֆոնդային ցուցանմուշների պահպանություն 6477 նմուշ Ցուցանմուշների ախտահանում՝ 4 անգամ վերականգնված 30 ցուցանմուշ համալրված ցուցանմուշ՝10 2000 հատ 1 մատյան	30.12.2015թ.	**16700000**
3	Գիտահավաքագրական միջոցառումների իրականացում	Ֆոնդերի համալրման և վերականգնման նպատակով նյութերի հավաքագրում, ուսումնասիրում	Ֆոնդերի համալրման համար Գիտարշավ, գործուղում	Գիտարշավ (2 հատ) Գործուղում (5 հատ)	30.12.2015թ.	**1680000**
4	Գրադարանի վարում	Թանգարանի գրադարանի կանոնակարգում և վարում	Գրքերի և ամսագրերի մշակում, վերականգնում, սպասարկում	Մշակված 10 գրադարանային գրքեր և ամսագրեր, վերականգնված 20 միավոր, սպասրկվող 35 աշխատակիցներ	30.12.2015թ.	**1200000**
5	Հանրահռչակման և հասարակայնության հետ կապերի բաժնի միջոցառումների իրականացում • Ցուցադրության և մասսայական միջոցառումների իրականացում (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով): • Ցուցասրահներում ցուցանմուշների հաշվառման և անվանումների ճշտման	Հասարակության տարբեր սոցիալական խավերի բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական քարոզչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում: Գիտական տեղեկատվության արդիականացում: Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում	Հասարակության բնապահպանական պատասխանատվության ապահովում. 1. բնապահպանական միջոցառումներ 2. ժամանակավոր ցուցահանդեսների Կազմակերպում	բնապահպանական միջոցառումներ 5 հատ ժամանակավոր ցուցահանդեսների կազմակերպում 10 հատ Սպասարկված 20000 այցելուներ, կազմակերպած 350 էքսկուրսիաներ ավելացված 10 դիդակտիկ նյութեր	30.12.2015թ.	**20006100**

	իրականացում • Ցուցադրությունում ներկայացվող վահանակների փոփոխությունների իրականացում • Ցուցասրահների ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում • Ձկնատեսակների ակվարիումային ցուցադրություն • Համալրվող ակվարիումային ձկնատեսակների լուսանկարահանում, պիտակների մշակում և տպագրում		Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում Բնության նկատմամբ հոգատարության դաստիարակում	Վահանակ-2 հատ Ցուցանմուշների ախտահանում՝ 4 անգամ Ձկնատեսակներ - 300 հատ Պիտակներ – 20 հատ		
6	**Շիրակի մասնաճյուղ** Այցելուների սպասարկում ***Միջոցառումների կազմակերպում՝*** • Բնապահպանի օր • Կենդանիների պաշտպանության համաշխարհային օր ***Ժամանակավոր ցուցահանդես*** • Բնությունը մանուկների աչքերով • Ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում	Շիրակի մարզում բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության բնապահպանական քարոզչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում	Հայաստանի բնության վերաբերյալ գիտելիքների բազայի ավելացում: Ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում	սպասարկված 500 այցելու 15 էքսկուրսիա Ցուցանմուշների ախտահանում՝ 2 անգամ	30.12.2015թ.	**1200000**
	Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծում	Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծում	Մշակութային շարժական ժառանգության արժեքների վերաբերյալ տեղեկույթի համակարգում և հանրահռչակում	Մշակութային շարժական արժեքների վերաբերյալ թվայնացված, հանրության համար հասանելի տեղեկույթ		**3434000**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**44370100**

Հավելված № 2
«26» « հունվարի » 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-Սուբ-15/01 պայմանագրի

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007995
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար

Ա. Մինասյան
(ստորագրություն)

Կազմակերպություն
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ

ք.Երևան, Տիգրան Մեծի 73
«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հաշվեհամար 118000647917 00
ՀՎՀՀ 02519851
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն

Գ. Ղազարյան
(ստորագրություն)

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1046	ԱԾ 11	Նկարագրություն Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Թանգարանային ցուցանմուշների ուսումնասիրում, հաշվառում և պահպանում (ցուցանմուշների քանակը)	6482	6487	6492	6497				
		Սպասարկվող այցելուների թիվը	1500	10000	12000	20000				
		Ժամանակավոր բնապահպանական ցուցահանդեսների կազմակերպում (ցուցահանդեսների քանակը)	2	5	7	10				
		Բնապահպանական միջոցառումների կազմակերպում, (միջոցառումների քանակը)	1	4	4	5				
		Հրատարակչական աշխատանքների՝ բացիկների մշակում, տպագրում ՀՀ Կարմիր գրքի թռչունների նկարներով (օրինակ)			1000	1000				
		Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծում և գործակցում (թիվը)	1	1	1	1				
Որակական		Մշակված չէ								
Ժամկետայնության		Մշակված չէ								
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X	X	X	X	9206.0	19588.5	30090.2	44370.1
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը										
1046 Թանգարանների ծրագիր										
Վերջնական արդյունքի նկարագրությունը										
ՀՀ մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս հանդիսացող թանգարանային հավաքածուների անխաթար պահպանումն ու փոխանցումը սերունդներին: Թանգարանային հավաքածուներին հանրության հաղորդակցության աճ՝ նպաստելով հանրապետությունում մշակութային զբոսաշրջության խթանմանը, տնտեսական զարգացմանը, ինչպես նաև ռազմավարական ծրագրերի իրագործմանը										
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը										
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ										

Հավելված № 3
«26» «հունվարի» 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-Սուբ-15/01 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք
ՀՀ 900011007995
ՀՎՀՀ 02507198

Կազմակերպություն

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ
ք.Երևան, Տիգրան Մեծի 73
«Անելիք Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11800064791700
ՀՎՀՀ 02519651

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ Սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «26» «հունվարի» 2015թ.

Պայմանագրի համարը՝ № ՀՀ-ԲՆ-Սուբ 14/01

Պետական մարմինը՝ ի դեմս ***ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ Խ.Աղաբեկյանի,*** *և Կազմակերպությունը՝ ի դեմս* ***«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ.Ղազարյանի,*** *կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.*

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «___» «_____» 2015թ.-ից «___» «_____» 2015թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող սուբսիդիայի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը՝ ամիս ամսաթիվ*
1	2	3	4	5=3-4	6=2x5	7
Ընդամենը						

ԸՆԴՈՒՆԵՑ

_____
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ. Տ.

ՀԱՆՁՆԵՑ

_____
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ. Տ.